

Կարողությունների գնահատում

Գնահատում

- 1 Գործընթացներ, որոնք օգտագործվում են անհատի ուսումնառության, ձեռքբերումների և կարողությունների հավաքելու և մեկնաբանելու համար:
- 2 Ուսումնառության, ձեռքբերումների և կարողությունների վկայությունների մասին դատողություններ կատարելու գործողություն:

ԵԿՀ (Եվրոպական Կրթական Հիմնադրամ), Աշխատաշուկայի տերմինաբանական բառարան և

չափորոշիչների ու ուսումնական ծրագրերի մշակման եզրույթներ

Ներածություն

Ղազախստանում ձեռնարկատիրական հմտությունները զարգացնելու ծրագրի շրջանակներում թիմերն ընտրել են ուսումնառության մոտեցում, որն ուսանողներին ներգրավում է ձեռնարկատիրական և կազմակերպական հմտությունները զարգացնող պրակտիկ գործողություններում: Այս մոտեցումը մեծ հաջողությամբ օգտագործվել է ինչպես մասնագիտական, այնպես էլ ընդհանուր կամ ուսումնառության փուլերում: Այնուամենայնիվ, ծրագրի թիմին պարզ դարձավ, որ այս տիպի ուսումնառության գնահատումը խիստ տարբերվում է թեստավորման և գնահատման ավանդական մեթոդներից: Այս նյութը կօգնի թիմերին գտնելու գնահատման համապատասխան և հարմար մեթոդներ:

Ի՞նչ է գնահատումը

Գնահատումը ինֆորմացիոն համակարգ է, որը հնարավոր է դարձնում որոշումների կայացումը: Գնահատման համակարգում ինֆորմացիան հավաքվում և ստուգվում է ըստ չափանիշների և ներկայացվում է այդ ինֆորմացիան օգտագործել ցանկացողների համար հարմար եղանակով:

Ենթադրենք ես ցանկանում եմ գնել օգտագործված ավտոմեքենա: Ես կարող եմ ինքնուրույն գնահատել մեքենայի վիճակը և գինը, բայց ես ինժեներ չեմ, այսինքն չեմ կարող իմանալ ինչ փնտրել կամ արդյոք մեքենան արժի այնքան, որքան պահանջվում է: Որպես այլընտրանք՝ ես կարող եմ դիմել մասնագետ մեխանիկի, որպեսզի նա գննի մեքենան և ինձ հաշվետվություն ներկայացնի: Այդ հաշվետվությունը կմանրամասնի ավտոմեքենայի վիճակը, կմատնանշի պրոբլեմները, կհաշվարկի վերանորոգման մոտավոր արժեքը և կտա մեքենայի գնի վերաբերյալ պրոֆեսիոնալ գնահատական: Չափանիշը, որը կօգտագործի մասնագետը գնահատական տալու համար, կլինի տվյալ մեքենայի և նոր մեքենայի վիճակների համեմատությունը: Ես կարող եմ օգտագործել այս ինֆորմացիան, որպեսզի որոշում կայացնեմ՝ արդյո՞ք ես կգնեմ այդ մեքենան, թե՞ կսակարկեմ գինը՝ հիմնվելով պրոֆեսիոնալ գնահատման վրա:

Սա գնահատման օրինակ է: Ինֆորմացիան հավաքվում և գնահատվում է ըստ չափանիշների, որոնք հնարավորություն են տալիս կայացնել որոշում: Այս օրինակում գնահատվում է մի առարկա (ավտոմեքենա): Երբ անդրադառնում ենք մարդկանց ձեռքբերումների գնահատմանը, տեսնում ենք, որ կրկին կիրառվում են ինֆորմացիայի հավաքման և գնահատման ընդհանուր չափանիշները:

Ձեռնարկություններն անընդհատ իրականացնում են մարդկանց ձեռքբերումների գնահատում: Օրինակ, անձնակազմի հավաքագրման ժամանակ կազմակերպությունները պոտենցիալ թեկնածուների մասին ինֆորմացիա ձեռք են բերում հետևյալ աղբյուրներից.

- դիմումի թերթիկում ներկայացված ինֆորմացիայից
- թեկնածուների հարցազրույցից
- թեկնածուների իրականացրած պրակտիկ թեստից
- հարցում անցկացնելով այն մարդկանց հետ, որոնք ճանաչում են թեկնածուին և նրա աշխատանքը
- հաշվի առնելով որակավորումները և նախորդ աշխատանքի օրինակը

Այս ինֆորմացիան գնահատվում է «աշխատանքի նկարագրության կամ անհատի առանձնահատկությունը» չափանիշով:

Ինֆորմացիայի հավաքման և գնահատման այս մեթոդը շատ թանկ է, այսինքն մենք ակնկալում ենք այնպիսի գնահատում, որն ավելի կարժեքավորի որոշման կայացումը: Դիմումի թերթիկների, հարցազրույցների գնահատումը, պրակտիկ թեստերի կազմակերպումը, պրոֆեսիոնալ մեխանիկի մատուցած ծառայությունների դիմաց վճարումները կազմում են մեծ գումարներ, և մենք ակնկալում ենք այս ներդրումի դիմաց որոշակի փոխհատուցում:

Գնահատումն օգտագործվում է տարբեր բաժնետերերի կողմից՝ որոշում կայացնելու համար: Օրինակ, մասնագիտական ուսումնառության և դասավանդման մեջ գնահատման արդյունքներն օգտագործվում են, որպեսզի.

- թույլ տան ուսանողներին անցնել ուսումնառության հաջորդ մակարդակ
- ուսանողներին թույլ տան մուտք գործել կրթական ավելի բարձր մակարդակներ
- հնարավորություն տան որակավորված անձանց մասնակցել որոշակի աշխատանքների
- գնահատեն կուրսի հաջողությունը
- գնահատեն ուսուցիչների դասավանդման արդյունավետությունը
- իրականացնեն զբաղվածության վերաբերյալ որոշումների կայացում

ՄԿՈՒ-ի շրջանակներում մենք ծանր աշխատանք ենք կատարել, որպեսզի ստեղծենք ՄԿՈՒ ստանդարտներ, ուսումնական ծրագիր և ուսումնառության պրոցես, որը համապատասխանում է զբաղվածության պահանջներին: Բայց մենք պետք է ներկայացնենք ուսանողների հաջողությունների մասին ինֆորմացիան այն եղանակներով, որոնք օգտակար կլինեն բոլոր բաժնետերերի համար: Այսպիսով, օրինակ, գնահատականների համակարգը կարող է օգտակար լինել այն դպրոցում, որտեղ բոլոր ուսուցիչները համակարծիք են գնահատականների նշանակության վերաբերյալ, բայց այս համակարգը կարող է սահմանափակ օգտակարություն ունենալ այն գործատուների համար, որոնք նոր աշխատակիցներ են փնտրում:


Ի՞նչ ենք մենք գնահատում

Մենք գիտենք, որ ՄԿՈՒ-ում գնահատումը հետապնդում է ամենաքիչը 2 նպատակ: Առաջինը ՄԿՈՒ դպրոցի «**նեքստում**» է: Ուսուցիչները գնահատում են իրենց ուսանողների ունեցած առաջընթացը, օգտագործում են այս ինֆորմացիան, որպեսզի գնահատեն իրենց գործունեությունը և դպրոցի առաջարկած ծրագիրը: Այս տիպի գնահատումը հիմնվում է ձեռք բերված ուսումնառության վրա:

Եկրորդը դպրոցից «**դուրս**» է: Գնահատման այս տիպի առաջնահերթ թիրախը գործատուներն են, որոնք պահանջում են ինֆորմացիա ուսանողների աշխատանքային ունակությունների վերաբերյալ: Այս տիպի գնահատումը հիմնված է ձեռք բերված հմտությունների վրա:

Այսպիսով, առաջին տարբերակումը մենք պետք է իրականացնենք **Ուսուցանման գնահատման** և **Հմտությունների գնահատման** միջև:

Տեխնիկապես գնահատման տարբեր ձևերը կոչվում են «ընթացիկ» (ուսումնառության գնահատում) և «ամփոփիչ» (կարողությունների գնահատում): Մենք կարող ենք ցույց տալ այդ տարբերությունը ուսումնառության կորի միջոցով.



Ուսումնառության կոր

Ընթացիկ գնահատման նպատակն է ցույց տալ որոշակի նպատակի հասնելու ուղղությամբ ուսանողի ունեցած առաջընթացը: Նպատակ կարող է լինել ուսումնառության ծրագրում ինչ-որ ուսումնառության նպատակ կամ «արդյունքներից» մեկը, որ մենք կարող ենք գտնել ՄԿՈԻ ստանդարտների զբաղվածության առանձնահատկությունների մեջ: Ընթացիկ գնահատումը պետք է ապահովի ուսանողների համար օգտակար փոխհատուցում՝ նրանց տեղեկացնելով, թե ինչ առաջընթաց են իրենք ունեցել:

Ամփոփիչ գնահատման նպատակն է պարզել, թե արդյոք տվյալ անձը հասել է նպատակակետին, թե ոչ:

Ի՞նչ և ինչպե՞ս կարող ենք գնահատել

Մենք կարող ենք գնահատել ընդամենը 3 բան.

- Ինչ է արվել (արդյունքը)
- Ինչպես է արվել (գործընթացը)
- Ինչ գիտի տվյալ անձը (գիտելիքը և ըմբռնումը)

Սրանցից յուրաքանչյուրը գնահատվում է տարբեր մեթոդներով, ինչպես ցույց է տրված ներքոնշյալ աղյուսակում.

Ինչ ենք գնահատում	Ինչպես ենք գնահատում
Արդյունքներ	Փորձաքննություն
Գործընթաց	Դիտարկում
Գիտելիք և ըմբռնում	Թեստավորում. <ul style="list-style-type: none"> բանավոր թեստավորում գրավոր թեստավորում

Պրակտիկայում մեթոդներից յուրաքանչյուրը կարող է ունենալ շատ ենթամեթոդներ: Փորձաքննությունը կարող է ներառել դասարանում աշխատանքի ստուգում կամ նախկինում իրականացված աշխատանքի զննում (ներառյալ աշխատավայրում կատարած աշխատանքը): Դիտարկումը կարող է լինել տեսագրության կամ ձայնագրության միջոցով անձի ուղղակի հսկում: Գրավոր թեստավորումը պետք է հիմնված լինի տարբերակների, ուսումնական օրինակների կամ ավանդական քննությունների վրա: Բանավոր թեստավորումը կարող է ներառել ոչ ֆորմալ հարցում ուսուցչի կողմից կամ ավելի ֆորմալ հարցում քննական հանձնաժողովի կողմից:

Անցյալում դժվարությունը կայանում էր նրանում, որ մեծամասամբ գնահատումը ներառում էր սահմանափակ պրակտիկ թեստերով գիտելիքների և ըմբռնման թեստավորում: Բայց այս մեթոդները խիստ սահմանափակ են, եթե մենք փորձում ենք գնահատել ունակությունները, որտեղ գնահատվում է գիտելիքների և հմտությունների կիրառությունը իրական կյանքում: Բացի այդ, այնպիսի կարևոր հիմնական հմտություններ, ինչպիսիք են հաղորդակցությունը, թիմային աշխատանքը, պլանավորումը և որոշումների կայացումը գնահատելու համար այս մեթոդները լավագույնը չեն:

Ինչպե՞ս ենք իրականացնում դատողություններ

Դատողություններն իրականացվում են որոշակի չափանիշներով: Գնահատումն ըստ չափանիշների իրականացված դատողություն է: Նոր կադրերի հավաքագրման օրինակում կազմակերպությունը պետք է ըստ աշխատանքի նկարագրության կամ անձի որակավորման սահմանի չափանիշներ աշխատանքի ընդունվողի համար: Որոշ չափանիշներ կլինեն պարզ և հասկանալի, օրինակ՝ նրանք պետք է ունենան մասնագիտական որակավորման դիպլոմ կամ վկայական: Որոշ չափանիշներ ավելի քիչ են պարզ, օրինակ՝ նրանք պետք է ունենան նմանատիպ կազմակերպությունում աշխատանքի որոշակի փորձ: Կարող են լինել նաև հավելյալ չափանիշներ, այսինքն՝ լավ կլիներ, որ անձը համապատասխաներ այդ չափանիշներին, բայց դա առաջնահերթ չէ: Օրինակ, օտար լեզուների իմացությունը ցանկալի է: Հավելյալ չափանիշները հաճախ ավելի քիչ են անհրաժեշտ և դրանք անձը կարող է սովորել ժամանակի ընթացքում:

Այսպիսով, գնահատման ժամանակ առաջին հերթին պետք է դատողություններ իրականացնելու համար անհրաժեշտ պարզ և ճշգրիտ չափանիշներ սահմանել:

Ինչպե՞ս ենք սահմանում գնահատման չափանիշները

Գնահատման չափանիշները կախված են ընդունելի շեղումների աստիճանից: Որոշ դեպքերում ուսանողը չունի շեղման իրավունք (օրինակ առողջապահական և ապահովության նորմերի պարագայում): Բայց հաճախ գոյություն ունի շեղումների որոշակի շրջանակ, որն ընդունելի է և շատ դեպքերում ուսանողի գործունեությունը կախված է իրավիճակից: Այս 3 տիպերը կարող ենք տեսնել աղյուսակում.

Շեղման մակարդակ	Չափանիշների տիպեր	Գործողությունը բնութագրող բառերի օրինակներ
Բացարձակ	Այո/Ոչ	Ճշգրիտ
Թույլատրելի	Շեղումների ընդունելի շրջանակ	Ճիշտ
Պայմանական	Շեղումները կախված են իրավիճակից	Համապատասխան

Այստեղ ներկայացված են գործողությունների օրինակներ, որտեղ կիրառվում են չափանիշների տարբեր տիպեր.

Չափանիշների օրինակներ	Սա օգտագործվում է, որովհետև...
<ul style="list-style-type: none"> Ընտրվել են էլեկտրալարի տեխնիկական ճշգրիտ պայմաններ 	Ոչ մի շեղում չի թույլատրվում, քանի որ սխալ լարի օգտագործման դեպքում հնարավոր է էլեկտրականության հետ կապված վտանգի առաջացում
<ul style="list-style-type: none"> Ափսեները ճշգրիտ են դասավորված՝ սեղանի ծայրից մոտավորապես երկու մատ խորության վրա 	Սեղանները և ափսեները (ինչպես նաև մատերը) ունեն տարբեր չափսեր և ձևեր, այսինքն չի կարող լինել որևէ կոնկրետ կամ «ճշգրիտ» դիրք
<ul style="list-style-type: none"> Ընտրվել է համապատասխան բաժակ՝ կախված ուտեստից 	Ուտեստը կնախանջի բաժակի տեսակը

Սրանք ընդամենը մի քանի օրինակներ էին: Գոյություն ունեն չափանիշները սահմանելու ավելի շատ բառեր: Ահա յուրաքանչյուր տեսակի ևս մի քանի օրինակներ.

Այո/Ոչ չափանիշներ (բացարձակ)	Մեկնաբանություններ
<ul style="list-style-type: none"> Մակերեսները տեսանելիորեն մաքուր են և ազատ փշուրներից 	Այս չափանիշն ընդամենը նախասահմանում է այն, ինչ պետք է լինի
<ul style="list-style-type: none"> Առողջապահական և ապահովության հագուստները համապատասխանում են իրավական պահանջներին 	Մենք օգտագործում ենք «համապատասխանում է» բառը, երբ իրավական նորմերը կամ ընթացակարգերը պետք է պահպանվեն
<ul style="list-style-type: none"> Սարքավորումը ստուգված է և ապահով է օգտագործման համար 	Առողջապահական և ապահովության նկատառումներով շեղում չի թույլատրվում
Շեղումների ընդունելի շրջանակ (թույլատրելի)	
<ul style="list-style-type: none"> Խոհանոց ուղարկված պատվերներն ընթեռնելի են 	Ձեռագրերը տարբեր են, բայց պետք է լինեն ընթեռնելի
<ul style="list-style-type: none"> Հաճախորդներին քաղաքավարի են ողջունել 	Մենք չպետք է ունենանք հաճախորդներին ողջունելու մեկ կոնկրետ եղանակ, բայց պետք է լինենք քաղաքավարի
<ul style="list-style-type: none"> Սեղանների սպասքն արագորեն փոխվում և թարմացվում է 	Շեղումներ թույլատրվում են: Այն չպետք է լինի անմիջապես, բայց օգտագործված սպասքը սեղանի վրա շատ երկար չպետք է մնա
Շեղումները կախված են իրավիճակից	

(Պայմանական)	
<ul style="list-style-type: none"> • Օգտագործվում է էլեկտրալարը ծածկելու համապատասխան ծածկույթ 	Օգտագործվող մեթոդը կախված է լարի տեսակից և տեղադրման ձևից
<ul style="list-style-type: none"> • Համապատասխան տիպի բավարար չափով թուղթ կա տպագրությունների վերծանման համար 	Քանակությունը կախված է տպագրությունների վերծանման երկարությունից և փաստաթղթի նպատակից
<ul style="list-style-type: none"> • Հանձնարարությունն իրական է 	Հանձնարարության իրականությունը կախված է նպատակից և առկա ռեսուրսներից

Ինչպես երևում է վերոնշյալ չափանիշներից, ինչքան հեռանում ենք «բացարձակ» չափանիշներից, այնքան ավելի են շատանում դատողությունները: Առաջին օրինակում միայն մեկ էլեկտրալար կարող էր համապատասխանել մասնագիտացմանը: Ցանկացած շեղում սխալ է: Սա շատ հեշտ է հասկանալ թե ուսանողի, և թե գնահատողի համար: Սա ճիշտ է նաև բացարձակ չափանիշների մնացած երեք օրինակների համար:

Բայց «շեղումների շրջանակին» անդրադառնալիս ամեն ինչ ավելի բարդանում է: Օրինակ, ինչպես պետք է դատել, արդյո՞ք ձեռագիրն ընթերցելի է, կամ ողջույնը՝ քաղաքավարի: Այս դեպքերում սահմանները բացահայտ են, և մենք կարող ենք ներկայացնել ուսանողներին քննելու օրինակներ: Սակայն այստեղ կգտնվի մի կետ, որտեղ ձեռագրի ընթերցելի կամ անընթերցելի լինելը կդառնա անհատական կարծիք: Գնահատման ֆորմալ համակարգերում գնահատողը դնում է ընդունելի սահմաններ, որոնցով գնահատվում են այսպիսի օրինակները: Սա կարող է ուսանողների համար լինել օգտակար քննարկման թեմա, հատկապես երբ նրանց քաջալերում են ներկայացնել իրենց սեփական օրինակները և զարգացնել գնահատման ստանդարտների «սեփականության» զգացումը:

«Շեղումները կախված են իրավիճակից» չափանիշների պարագայում դատողություններ իրականացնելը կարող է լինել ավելի հեշտ, քանի որ իրավիճակը սահմանում է թույլատրելի շեղումը: Օրինակ, օղու բաժակը տեղին չէ նախաձաշի ժամանակ (իրավիճակի իմացությունը նեղացնում է հնարավորությունների շրջանակը): Նմանապես, եթե մենք գիտենք, որ գործարանում պետք է տեղադրել մեկ ֆազ հզորությամբ լար, ապա թեթև պլաստմասսե ծածկույթն այստեղ տեղին չէ: Եվ կրկին մենք կարող ենք օգնել ուսանողներին հասկանալ չափանիշները, եթե անընդհատ բերվեն օրինակներ, թե ինչն է ընդունելի, և ինչը՝ ոչ:

Նախաձեռնության զարգացում, ռիսկի կառավարում

Ծրագրի նպատակն է զարգացնել նախաձեռնող երիտասարդներին, որոնք կարող են աշխատունակ լինել աշխատանքի շուկայում: Մենք ցանկանում ենք, որ մեր երիտասարդները լինեն ավելի ձկուն, հարմարվող, կարողանան որոշումներ կայացնել և մենք կարող ենք օգնել նրանց անել սա՝ ստեղծելով ուսումնառության այնպիսի մթնոլորտ, որտեղ նրանց պատրաստում են ընտրություններին և դժվարություններին: Սա նշանակում է, որ մենք պետք է խուսափենք գնահատման «բացարձակ» չափանիշներից: Իրականում շատ մասնագիտական գործունեություններ կապված են շեղումների հետ, և երիտասարդները պետք է սովորեն կառավարել դրանք: Պետք է սահմանափակել «բացարձակ» չափանիշները մինչև այնտեղ, որտեղ նրանք արդեն ուղղակի անհրաժեշտ են (սովորաբար դա կապված է անվտանգության, իրավական պահանջների հետ, կամ էլ երբ կա պոտենցիալ ռեսուրսների կորստի վտանգ):

Պետք է նաև օգնել երիտասարդներին կառավարել գործի սխալ ընթացքը (որը անպայմանորեն տեղի է ունենում աշխատանքի ժամանակ): Այս մասնավոր դեպքը կոչվում է «ռիսկի կառավարում»: Այն ներառում է.

- Պրոբլեմների կամ պոտենցիալ պրոբլեմների նկատմամբ միջավայրի գննում
- Փորձել ուղղել սխալներն առանց օգնության, մինչև իրավիճակը չի դառնում կրիտիկական
- Պրոբլեմները կարգավորելու համար օգտագործել առնչվող ռեսուրսներ (ներառյալ մարդկանց)
- Իմանալ, թե երբ է անհրաժեշտ դիմել փոձագետի խորհրդին, և իրավիճակն ավելի չվատթարացնել՝ փորձելով ուղղել ինչ-որ բան, որը մեր հնարավորություններից վեր է
- Փորձ ձեռք բերել հաջորդ անգամվա համար ավելի լավ նախապատրաստված լինելու համար

Մենք կարող ենք օգնել ուսանողներին զարգացնել այս հմտությունները բոլոր եղանակներով: Օրինակ.

- Տրամադրել գործիքների և սարքավորումների ոչ ամբողջական պաշար
- Առաջարկել «ռիսկի գնահատման» առաջադրանքներ
- Տրամադրել սխալ գործիքներ և սարքավորումներ
- Ուսուցողական գործողություններում մտցնել պրոբլեմներ և անսարքություններ
- Տրամադրել «փորձագետի» խորհուրդ, սակայն միայն անհրաժեշտության դեպքում
- Ուսանողների կողմից ինֆորմացիայի ստացման պահանջները վերածել հարցերի (օրինակ, «ինչպե՞ս պետք է անել...» - ինչպե՞ս կզտնեք, թե ինչպես անել...)
- Քաջալերել ուսանողներին գրանցել իրենց գործողությունները և նշել, թե ինչ կանեն նրանք ռիսկերի պարագայում

Մենք ցականում ենք հասնել նրան, որ ուսանողների մոտ ձևավորվի այս մոտեցման նկատմամբ «սեփականության» զգացում: Այսպիսով, ուսանողներին ռիսկի կառավարում «սովորեցնելու» փոխարեն մենք, օգտագործելով բոլոր առկա հնարավորությունները, կարող ենք օգնել նրանց ուսումնառության գործընթացում զարգացնել այս հմտություններն իրենց մեջ: Սա ենթադրում է հրահանգների փոխարեն այնպիսի հարցերի օգտագործում, ինչպիսիք են.

- Աշխատավայրում ինչպիսի՞ շեղումներ են սպասվում:
- Այս գործում ինչպիսի՞ շեղումներ և պահանջներ պետք է զարգացվեն:
- Եթե սա արվում է մեկ այլ իրավիճակում, ինչպիսի՞ գործիքներ և սարքավորումներ կօգտագործվեն և ինչու՞:
- Ի՞նչ տեղի կունենա, եթե դա ճիշտ չի կատարված:

Ինչպե՞ս ենք գնահատում ըստ չափանիշների

Գնահատման չափանիշները սահմանելուց հետո պետք է կատարել դատողություններ: Գոյություն ունի դատողություններ իրականացնելու 2 եղանակ.

- Կարող է անել/Դեռևս չի կարող անել
- Գնահատականների հաշվում

Որպես կանոն մենք իրականացնում ենք դատողություններ՝ գնահատականներ նշանակելու միջոցով: Մասնագիտական առարկաների համար այս համակարգը կարող է գործել և այն կարող է օգտակար լինել նաև ձևավորվող գնահատման պարագայում: Սակայն գործատուն ընդամենը ցանկանում է իմանալ արդյոք տվյալ անձը կարող է անել ինչ-որ բան: 5 բալանոց համակարգում 4 գնահատականը ոչինչ չի ասում գործատուին: Նրանք ցանկանում են

Իմանալ արդյոք տվյալ անձը կարող է տարբեր ձևերով դասավորել սեղանը՝ այո, կամ ոչ: Սա ամփոփիչ գնահատումն է:

Պետք չէ մոռանալ, որ մենք չենք ասում «անցնել» կամ «կտրվել», մենք օգտագործում ենք «կարող է անել/չի կարող անել» արտահայտությունները: Սա նշանակում է, որ եթե անձը չի համապատասխանում գնահատման չափանիշներին, մենք հավատացնում ենք, որ հետագա ուսումնառությանը զուգահեռ նա կհամապատասխանի այդ չափանիշներին: Սա նմանապես նշանակում է, որ եթե անձը չի համապատասխանում չափանիշներին, պետք է անմիջապես նրան տեղեկացնել, թե **ինչու** ինքը չի համապատասխանում այդ չափանիշին և **ինչ** պետք է սովորի՝ դրան համապատասխանելու համար:

Եթե ընտրում ենք նշանակել գնահատականներ, ապա կրկին ունենք գնահատման չափանիշների կարիք, բայց այս պարագայում գնահատման սխեման պետք է լինի պարզ և հասկանալի: Այդ նպատակով պետք է իրականացնել հետևյալ գործողությունները.

- Յուրաքանչյուր գնահատականի համար պետք է ունենալ առանձին չափանիշ
- Սխալների դեպքում գնահատականը կրճատվում է
- Առանձնացնել «հիմնական» և «ցանկալի» չափանիշները

Հաջորդ քայլերը

Ծրագրի հաջորդ քայլն է սահմանել թիմի կողմից ընդունված պարզ և հասկանալի չափանիշներ յուրաքանչյուր դասի համար: Պետք է համոզված լինել, որ մենք զարգացնում ենք չափանիշներ մասնագիտական հմտությունների համար, որոնք ներառված են ուսումնական պլանների մեջ, և հիմնական ու նախաձեռնական հմտությունների համար, որոնք ծրագրի հիմնական թիրախն են:

Բերենք թիմի աշխատանքը առաջնորդելու մի օրինակ՝ օգտագործելով «Կարող է անել/Չի կարող անել» մոդելը: Սա ընդամենը մեկ օրինակ է, և բոլոր ծրագրերի համար թիմերը պետք է զարգացնեն իրենց սեփական օրինակները: Որպես օրինակ մենք վերցրել ենք սեղանների դասավորությունը, և հավատացնում ենք, որ սա կլինի թիմային աշխատանք՝ հետագա պրեզենտացիայով:

«Սեղանի զցման» օրինակ

Գնահատման չափանիշներ– Մասնագիտական գործողություններ

Չափանիշներ	Այո/Ոչ	Եթե Ոչ՝ ինչ պետք է արվի չափանիշներին համապատասխանելու համար
Սեղանը դասավորությունից առաջ ստուգված է, մաքուր է և չկան փշրույթներ		
Ողջ սպասքը համապատասխանում է ճաշացանկին		
Սպասքը ապահով է տեղադրված և հասանելի է		
Սփռոցները և անձեռոցիկները սիմետրիկ են դասավորված		
Ափսեները ճիշտ են տեղադրված՝ սեղանից մոտավորապես երկու մատ խորության վրա		

Բաժակները տեղադրված են համապատասխան ձևով՝ հիմնական ափսեի վերևի աջ մասում		
Կտրող սպասքը տեղադրված է ափսեի յուրաքանչյուր կողմից հավասար հեռավորության վրա և ըստ օգտվելու հաջորդականության		
Սպասարկման հավելյալ պարագաները (ծաղիկներ, համեմունքներ և այլն) ձիշտ են դասավորված		
Ողջ սպասքը ստուգված է և անհրաժեշտության դեպքում՝ մաքրված		
Պարագաները դասավորված են անվտանգ և հիգիենիկ		

Գնահատման չափանիշներ – Հիմնական հմտություններ

Չափանիշներ	Այո/Ոչ	Եթե Ոչ՝ ինչ պետք է արվի չափանիշներին համապատասխանելու համար
Թիմի յուրաքանչյուր անդամ ապահով է աշխատում և չի խանգարում մյուսներին		
Խնդրանքի դեպքում թիմի անդամներն օգնություն և խորհուրդ են տրամադրում		
Անդամները համագործակցում են այն գործողությունների մեջ, որոնք ներառում են մեկից ավելի անձանց		
Յուրաքանչյուր ծրագիր համաձայնեցվում է թիմի կողմից		
Գործունեության յուրաքանչյուր փուլ ստուգվում է թիմի անդամների կողմից, և կատարվում են անհրաժեշտ փոփոխություններ		
Գործունեության արդյունքները բացատրվում են (բանավոր), պրոբլեմները, լուծումները և բարելավման պարզ և համառոտ հանձնարարությունները հաստատվում են		

Թիմի մեկնաբանությունները և առաջարկությունները շատ ողջունելի կլինեն:

**Նենսի Դոունի
Բոբ Մանսֆիլդ**

Հունիս 2002